ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ՀԱՂԱՐԾԻՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հաղարծին համայնքի սեփականությանը հանձնված գույքի ցանկում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է՝

1991-1992 թթ սեփականաշնորհման ժամանակ սեփականաշնորհվել են Հաղարծինի նախկին խորհրդային տնտեսությանը հանձնված անասնապահական ամբողջ համալիրը,բացառությամբ տարածքում գտնվող երեք հատ փայտաշեն կառույցները, որոնք չեն ընդգրկվել նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության 1997 թվականի մարտի 14-ի «Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին» թիվ 51 որոշման 10-րդ հավելվածով սահմանված Հաղարծին համայնքի գույքի ցանկում:Դրանք համայնքին չեն հանձնվել նաև ՀՀ կառավարության 1997 թվականի հունիսի 9-ի թիվ 173 որոշմամբ նախատեսված կարգով

Փայտաշեն կառույցների հանձնումը համայնքին հիմնավորվում է՝

Կանխել դրանք տիրազուրկ ճանաչվելու, թալանվելու , ապամոնտաժվելու շարունակական երևույթներից, իսկ համայնքին՝ որպես միակ սեփականատիրոջ իրականացնելու օրենսդրությամբ նախատեսված պահպանության, օգտագործման, տիրապետման և տնօրինման լիազորությունները:

Համայնքի կողմից փայտաշեն կառույցների նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերմամբ համայնքը կունենա դրանք վերանորոգելու, ներդրումներ կատարելու, որպես գյուղատնտեսական արտադրանքների պահպանության պահեստներ, չորանոցներ օգտագործելու, իսկ անհրաժեշտության դեպքերում կտրվեն վարձակալության, դրանով իսկ որոշակիորեն կավելանա համայնքի բյուջեյի մուտքային մասը:

Առանց սեփականության իրավունքի ձեռք բերման համայնքը չունի դրանց պահպանությունը և տնօրինումը իրականացնելու, ինչպես նաև իրավական հիմք անշարժ գույքի գրանցման պետական մարմնում գույքային իրավունքները գրանցելու և որպես սեփականատեր հանդես գալու համար որևէ լիազորություն:

Հաղարծին համայնքի ղեկավար Ս.Պողոսյան